19. ԻՐԵՔ ՀԱՎԿԻԹ

Կէղնի, չէղնի թագավորի մը աղա կէղնի։ Էդ տղեն օրըմ կելնի օլրտելու, պառավրմ հ՚ռաստ կիգա ուրեն։ Տղեն կվերցու քարըմ կթալե, թավակալի կէրթա քիսի ըդ պառվու կուժ կոտրի։

Պառավ կֆքրի ինք ուրեն, կասե. «Ես ինչ ասեմ էդոր»։— Լաո,— կասե,— թագավորի տղա ես ու մեկուճար, անիծեմ՝ չէղնի, չանիծեմ՝ չէղնի. բան օր կասեմ, իրեք հավկթի սեր մաշիս դու բալքիմ։

Պառվու ասելու վրեն, տղեն օր ղոր քանի էրթա կհալի ու մաշի։

Թագավոր կտեսնա օր ուր տղեն քանի էրթա՝ հետ կէրթա։ Կկանչե զտղեն, կասե.— Քզիկ ի՞նչ է խամի, օր քանի էրթաս, հետ կէրթաս։

— Թագավոր ապրած,— կըսե տղեն,— ես լե չըմ գինա։ Օրըմ գացիր ենք օլրտելու, քարըմ վերցի կթալենք, թավակալի գնաց առավ պառվու կուժ կոտրավ։ Ասեց. «Լաո, թագավորի տղա ես ու մեկուճար, անիծեմ զքզիկ՝ չէղնի, չանիծեմ՝ չէղնի, բան օր կասեմ քզիկ՝ բալքեմ դու իրեք հավկթի կրակ վառվիս»։ Էն օրվընե կրակ հ՚ընկեր է սիրտս ու կվառի, կէնեմ, չէնեմ ճար չկա։

Թագավոր ինկ լե չկոնա բան ասե, բան չը հասկնա օր ասե։

Կկանչե զուր բեդաբեդներ, կհասկցու, կթալեն բոնեն, էնդոնք լե ճարըմ չեն կրոնա հանի։

Տղեն է, կտեսնա օր նը էնդորնե, նը էնդորնե ֆայտա կա, կէլնի կկանչե զուր աստված, կհեծնե զուր ձին ու կընկնի ճամբախ։

Շատ կէրթա, քիչ կէրթա ըխտիյար հայու մը հ՚ռաստ կիգա։ Կտեսնա օր նստուկ է ճամբու հ՚օրթոլախ։ Բարև կիտա։ Էն լե զբարև կառնե։ Կհարցու կասե.— Աղեկ կտրիճ, աղեկ մանուկ, հ՚ու՞ր կէրթաս։

Կասե.— Վալայի, օրըմ հըմլա բան հ'ռաստ էկավ ընծիկ։ Թավակալի քարըմ թալի, գնաց առավ պառվու մը կուժ կոտրավ։ Էդ պառավ բան օր ասեց ընծիկ, ասեց՝ դելակ կէնեմ, դու իրեք հավկիթի կրակ վառվիս։ Էդ խոսքն էղավ բըծեղըմ կրակ, հ'ընկավ իմ ջան, հըմկա էկեր իմ կէրթամ էդ հավկըթներու հ'ետևեն, աճայիպ դու կառնա՞ս ընծիկ ճամբե մը ցուցուս։

Հալվորն կասե.— Կառնամ, աման չաթին է, աստված քու հետ էղնի, դու լե կանչե ղքու աստված ու գնա քու ճամբու հետ։ Կէրթաս հ'ռաստ կիգաս վեց դռան, իրեք դուռ բաց ին, իրեք լե դրուկ ին, զբաց դռներ կդնես, զդրուկ դռներ կբանաս, կէլնես վի, քու դեմ պատուհանի աշկունկըմ կա, կվերցուս կդառնաս կիգաս, հետևդ չըս իշքի, օր իշքեցիր, կդառնաս քար։ Կառնես կիգաս։ Քզիկ բանըմ թամբի կէնիմ. չէղնի ցամաք տեխ կոտրես զէդ հավկըթներ, ջրով տեխըմ կկոտրես։

Տղեն է, կէրթա հալվորու ըսածի պես հ'ռաստ կիգա վեց դռան։ Իրեք դուռ դրուկ կէղնեն, իրեք լե բաց։ Զբաց դռներ կփակի*, դրուկ դռներ կբանա։ Կէլնի վի, կտեսնա օր աշկունքի մը մեջ իրեկ հավկիթ կա դրուկ։ Կվերու դնե ծոցկ, հետև լե չիշքե, կդառնա կիգա։

Կիգա, շատ կիգա, սիրտ էլ չըթըփըդի, ջուր չէղնի ճամբու վրեն, կհանե ծոցեն հավկիթըմ, կասե՝ «Տեսնամ ի՞նչ կա էդ հավկթի մեջ»։

Կասե ու կզարկե գետին։ Օր կզարկե գետին, կտեսնա օր հուրնի հրեղեն ախչիկըմ դուրս հ'ելավ հավկթի մեջեն ու վիսա կբոռա. «Էրա ու վառա»։

Տղեն կիշքե կուշտ ու բոլոր, էնդին կզարկվի, էնդին կզարկվի, ջուր չգտնա, ախչիկ կէղնի գունդըմ փոշի։

Շատ կիգա, քիչ կիգա, մեկ լե համբերութեն չունի, կհանե զմեկել հավկիթ լե կկոտրե։ Հուրնեկ հրեղեն ախչիկըմ դուրս կէլնի հավկիթի միջեն։

Կբոռա. «Յամա՞ն էրեցա, յամա՞ն վառա, պուտըմ ջուր»։ Տղեն հ'ուր օր կզարկե, ջուր չգտնա, ախչիկ կվառի, կէղնի փոշի։

Կիգա քիչըմ տեխ, չէ՞ մարախ է էղի, կհանե զմեկել հավկիթ լե, կտեսնա օր էդտեխ ձի մը էկեր է կոխի, գետին պըրընճեր է, անձրևու ջրեր ժողվեր ին, էկի լցվի էս պըրընճի մեջ, զհավկիթն կկոտրե։ Օր կկոտրե, ախչիկ կէլնի դուրս, կբոռա. «Էրա, վառա»։ Տղեն կվազնե, լըփով ջուր կբերե խըմցու ախչկան։ Կառնե թարկին ու կքշե։

Կիգա, կհասնի ուրանց քաղքի մոտ։ Հավուզըմ կէղնի էդ տեխ, հավզի գլուխ լե՝ ծառըմ։ Կնստեն էդ տեխ, տղեն կասե. «Հըմլա չէղնի,

---

* Բնագրի մեջ՝ կբանա, ուղղված է ըստ իմաստի (Ս. Կ.)։

ես պիտի թալեմ զտխչիկ էդա տեխ, էրթամ քաղաք, խաբար իտամ մըր տուն, դոլով ու ղուռնով թըղ հ՝իգան առնեն, իգան»։

Զախչիկ կհանե ծառ, ինկ կթորկե կիգա քաղաք, օր մարդ ճամբե կնկա հ՝առեչն, առնեն իգան։

Ախչիկն է, օր կէլնի ծառ, ջավի։ չէ՞ կզարկե ջրի մեջ։ Էնդիեն հովվին գեշատես ախչրկըմ կէղնի, կէլնի ղկուժ կառնե, կիգա օր ջուր տանե։

Կիգա վըր հավուզին, կտեսնա օր շավխըմ կա ջրի մեջ։ Զգլուխ վի ելվերցու, կտեսնա օր հուրնի-հրեղեն ախչիկըմ։ Զկուժ կթորկե հ՝ողի, կէլնի ծառ, հովվի ախչիկն խվաթով կէղնի, կհարցու ախչկաց.—Ախչի՛, դու ի՞նչ կէնիս էդա տեխ։

Կասե.— Ես թագավորի տղի կնիկն եմ, ինկ գնաց քաղաք, օր մարդ ղրկե, առնե ղիս էրթա։

Զէդ օր կասե, ախչկա սիրտ կավրի. «Կանի առնեմ ղէդոր հալվըներ վրայեն, հագնեմ, զինք լե թալեմ ծառուց ցած, թագավորի տղեն թրի։ հ՝իգա, գինա ես էն ախչիկն իմ, առնե զիս, էրթա էնե ուրեն կնիկ»։

Կհանե զախչկա հալվըներ, կհագնի ու կվերցու զախչիկ ծառեն գրոմփ ցած։ Օր կթալե ցած, ախչիկ կէղնի փունչրմ մանուշակ։

Թագավորի տղեն կիգա, կժողվե զուր մարդիկ, դոլով ու ղուռնով կառնե կիգա։

Կիգա կտեսնա չիլ-աչանց ախչիկըմ նստուկ է ծառու վրեն։ Կասե.— Ախչի, էդ ծառու վրավու ախչիկն իմա՞լ էղավ։

Ախչիկն կասե.— Ես իմ։

Թագավորի տղեն կասե.— Ջանըմ, քու մեկ մռութ հ՝երկինքն է, մեկ լե՝ գետին, դու իմա՞լ էղար էն ախչիկ, էն ախչիկ մաներ բըլորման շուշա։

Ախչիկն կասե.—Ասիմ, իմ հոր օչխար էդա տեխնէր, գացի քշեցի, բոռացի էրեցի՝ հրռ-հրռ, մըռըթներս ուռան, արև առավ վրեն, սևցավ։

Թագավորի տղի ճար կկտրի, կիշու զախչիկ, կքաղե զծառու տկու մանուշակ լե, դոլ ու ղուռնեն կզարկե, կառնե կիգա տուն։

Էկավ տուն, օր ներս պիտի մտներ, ախչիկ զէրկու օտկ դրեց մեկ սոլ, ասեց.— Ներս չըմ մտնի, չուր զքու ձեռքի մանուշակ ընծիկ չի տաս։

Զէ՞ գիներ օր մանուշակ ախչիկն էր։

Տղի ճար կտրավ, զմանուշակ տվեց։ Ախչիկ կրտրռտեց, լըցեց բախչի մեջ, հ՝ելավ վերին դին։

Հ՝ելան վերին դին, յոթն օր հարսնեկ էրին, խըլրսան։

Էրկու, իրեկ ամիս հ՝ընցավ, ախչիկ տեսավ օր էդ տեխ օր մանուշակ կրտրռտեր էր, թափի, խորոտիկ ծառըմ է էղի, հրմալ ծառ իսկի չըր էղի։

Ինն ամիս, ինն սահաթ, ինն օր, ինն դախեն օր թմավ, ախչիկ պառկավ, աղե մը բերեց։

Թագավորի տղեն օրերուց օրըմ գնաց բախչեն, զէդ ծառ տեսավ, չէ՞ սեր կքաշե, զուր սեր թալեց վըր էդ ծառումն։

Տղեն օր էղավ, ախչիկն ասեց.— Զէդա ծառ կկտրեմ, շինեմ օրոց իմ տղին։

Թագավորի տղեն էնդին զարկեց, էնդին զարկեց, ճար չէղավ, ախըր ինիկ կտրեց։ Կանչեց էկավ նաճար, տվեց օրոց շինել։ Նաճարն օր կտաշեր, պառավըմ լե կոլըրտեր, տաշեղ կժողվեր։ Տեսավ օր թագավորի դուռ նաճար կբանի, էկավ զէդ տաշեղներ ժողվեց, տարավ։ Ըդ տաշեղներու մեջեն կտորըմ՝ փետ պառավ խոնջեն փետ շինեց, զարկեց պատ։ Պառավն է, հ՝ըմնօր կէլներ դուրս, հ՝իրկուն նոր կդառներ կիգեր, պառկեր քներ։

Էդ խոնջեն փետն է, պառավ օր կէրթա դուրս, կիջնի պատեն, կավլե զտախտ, ժեխ թափե, կիգա զթունդիր կվառե, կէփե զատ, զկեսն կուտան, կես լե կթալե պառվուն, կէլնի կէրթա մտնի պատի ծակ։

Պառավն է, օրըմ չէ, էրկու չէ, կասե. «Զանըմ, ըդա ո՞րն է, կիգա իմ տուն, էնե զիմ խըզմաթ, հորթե թափե ու թորկե էրթա, հըմլա չէղնի, պիտի պահեմ տեսնամ էդ ո՞րն է»։

Օրըմ լե կէլնի փաթվի խըսել, պատըվտի դռան հ՝ետև։ Մեկ լե կըտեսնա, օր ուր մախաթ զարկեր է պատ, թը՛փ, հ՝ընկավ զետին, էղավ ախչիկըմ օր իսկի չէր էղի. վերցուց զավել ձեռկ, զտախտ ավլեց, հ՝իստկեց, էկավ զթունդիր չենկեց, վառեց, էփեց կերակուր, կեսն լցեց ուրեն, կերավ, կես լե թալեց պառվուն. էդ էր, օր կէլներ էղներ մեկ լե խոնջեն փետ, մտներ պատի ծակ, պառավ հասավ բռնեց։ Ասեց.— Ախչի, ընծիկ զավակ չկա, դու էղի ընծի ախչիկ, ես լե քզիկ մեր։

— Շատ աղեկ,— կասե ախչիկ,— ես կէղնեմ քզիկ ախչիկ էն խավլով, օր էրթաս թագավորի տղից հինգ ձի հ՝ուզիս, բերիս հ՝ոդա բըտենք։

Պառավն կասե.— Ախչի, լաո, մղիկ խոտ չկա, հարդ չկա, ինչո՞վ կպահենք։

Ախչիկն կասե.— Քզիկ լախա չկա, դու գնա բի։

Պառավն կէրթա, կառնե կիգա։ Օր կբերե, ախչիկ կէլնի զուր օտներ կլվա, կհանե, դռան հ՝առջև թափե։

Լուսուն կէլնի, կտեսնա օր յոնճալըխըմ էղի, կիտա մարդու սիրտ։

Կբերե զձիանք, կթորկե մեջ ըդ յոնճալըխին, կուտին կուշտ, կառնե, կիգա ներս կապե։

Հ՝իրկուն լե օր կէլնի, զձեռներ ու զէրես կլվա, կհանե թափե դուրս, կէլնի առվուտ, կթողե զձիանք մեջ, կուշտ կուտեն, կբերե կապե։

Հինգ ամիս էդ ախչկա հալն էդ կէլնի։ Զօտներ կլվա, կհանե թա-

փե դուրս, կէղնի ուռվուտ, զձեռկ ու հ՝երես օր կլվա կթափե դուրս. կէղնի դարի, կթորկե զձիանք մեջ, կուշտ կուտեն, փոր կդնեն, կառնե, կիգա ներս։ Հինդ ամիս կպահե զթագավորի տղի ձիանք, ամեկ մեկ կէղնեն մեկ-մեկ գոմեշ, դռնեն ներս չըն հ՝իդա։ Հինգ ամիսն օր կխըլլըսի, դենա թագավորի տղեն կիգա զձիանք տանե։ Կիգա ձիանուն թանբիհ կէնե, կասե.— Հար ես չիգամ, չէլնիք կանիք ձըր տեխեն, հ՝ելնեք դուրս։

Թագավորի տղեն է, կիգա օր զձիանք տանե։ Ինչ կէնե դուրս չըն էլնի։ Թե կզարկե, թե կթքու, տեխե ուրանց չեն խըլվըլա։

Կկանչե զպառավն կիգա։ Էն լե չկանա հանե դուրս։ Ըստ հաղ զախչիկ կկանչեն, կիգա։

Ախչիկն կիգա, կասե.— Հ՝ելեք գացեք, ձըր տեր օղորդ բեբաղգութեն էրեց իմ հետ, բըլե ես չըմ հավատա օր դուք բեբաղգ էղնեք։

Զէդ օր կասե, ձիանք կէլնեն, կընկնեն դուրս, կէրթան։

Թագավորի տղեն օղորդ օր բանըմ չասե, սիրտ կընկնի թըշ ու վըշ։ «Աճայիպ էդ ախչիկ ի՞նչ էր ասեց ընծիկ»։

Էդ մարախի մեջ կմնա, կառնե զձիանք կիգա տուն։

Կիգա տուն, կկանչե քանի մը հատ ախչիկ ու զէդ պառվու ախչիկ, կասե.— Թըղ հ՝իգան մըր տուն, քիչըմ մարախա կա, թըղ հնգրեն։

Թագավորի տղեն լե զէդ ախչիկ օր կբերե տուն, ինկ լե կէլնի մտնի մուղանդարեն ու անկաճ կէնե, թե էդոնք ի՞նչ կասեն իրարու։

Ախչիկներ վիրարու կժողվեն, կդնեն վըր էդ ախչկան օր հեքիաթըմ ասե ուրանց։

Ախչիկ լե զուր գլխու գալած, իմալ օր մենք պատմինք, մեկիկ-մեկիկ կպատմե ախչիկներուն։

Օր կպատմե, թագավորի տղեն մուղանդարից կէլնի դուրս, զախչիկ կբռնե, մակար հրմլա։

Նոր կբերե զհովվի ախչիկ ու զտղեն կմորթե գնե խատրրի մը մեջ, ճամբե էրթա ուր հոր տուն, կառնե զպառվու ախչիկ, փրթնի ազատի։

Աստծուց հ՝իշավ իրեկ խնձոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե անկաճ էնողին։